ԱԺԲԳ

ՏԵՂԵԿԱՆՔ

2019-2021թթ. Հայաստանի Հանրապետության պետական պարտքի վերաբերյալ (նոյեմբեր ամսվա վերջի դրությամբ)









2021թ. նոյեմբերի 30-ի դրությամբ՝

1) ՀՀ պետական պարտքը կազմել է 4 տրլ 450.1 մլրդ ՀՀ դրամ, աճելով 2020 թ. դեկտեմբերի 31-ի նկատմամբ՝ 6.9%-ով, 2020թ նոյեմբերի 30-ի նկատմամբ՝ 10.2%-ով և 2019թ. նոյեմբերի 30-ի նկատմամբ՝ 30%-ով,

2) ՀՀ կառավարության պարտքը կազմել է 4 տրլ 223.6 մլրդ ՀՀ դրամ, աճելով 2020թ. դեկտեմբերի 31-ի նկատմամբ՝ 7.6%-ով, 2020թ. նոյեմբերի 30-ի նկատմամբ՝ 11.3%-ով և 2019թ. նոյեմբերի 30-ի նկատմամբ՝ 32.9%-ով,

3) ՀՀ Կենտրոնական բանկի արտաքին պարտքը կազմել է 226.5 մլրդ ՀՀ դրամ, նվազելով 2020թ. դեկտեմբերի 31-ի նկատմամբ՝ 5.8%-ով, 2020թ. նոյեմբերի 30-ի նկատմամբ՝ 7.4%-ով, 2019թ. նոյեմբերի 30-ի նկատմամբ՝ 7.4%-ով,

4) ՀՀ պետական պարտքը դոլարային արտահայտությամբ կազմել է 9 մլրդ 159.3 մլն ԱՄՆ դոլար, աճելով 2020թ. դեկտեմբերի 31-ի նկատմամբ՝ 14.9%-ով, 2020թ. նոյեմբերի 30-ի նկատմամբ՝ 15.3%-ով, 2019թ. նոյեմբերի 30-ի նկատմամբ՝ 27.8%-ով,

5) ՀՀ կառավարության պարտքը դոլարային արտահայտությամբ կազմել է 8 մլրդ 693 մլն ԱՄՆ դոլար, աճելով 2020թ. դեկտեմբերի 31-ի նկատմամբ՝ 15.8%-ով, 2020թ.նոյեմբերի 30-ի նկատմամբ՝ 16.4%-ով, 2019թ. նոյեմբերի 30-ի նկատմամբ՝ 30.7%-ով,

6) ՀՀ ԿԲ արտաքին պարտքը դոլարային արտահայտությամբ կազմել է 466.3 մլն ԱՄՆ դոլար, աճելով 2020թ. դեկտեմբերի 31-ի նկատմամբ 1.4%-ով, իսկ 2020թ. նոյեմբերի 30-ի և 2019թ. նոյեմբերի 30-ի նկատմամբ նվազելով համապատասխանաբար 3.1%-ով և 8.9%-ով,

7) ՀՀ կառավարության արտաքին պարտքը կազմել է 3 տրլ 4.7 մլրդ ՀՀ դրամ, աճելով 2020թ. դեկտեմբերի 31-ի նկատմամբ՝ 2.8%-ով, 2020թ. նոյեմբերի 30-ի նկատմամբ՝ 7%-ով, 2019թ. նոյեմբերի 30-ի նկատմամբ՝ 23%-ով,

8) ՀՀ կառավարության ներքին պարտքը կազմել է 1 տրլ 218.9 մլրդ ՀՀ դրամ, աճելով 2020թ. դեկտեմբերի 31-ի նկատմամբ՝ 21.8%-ով, 2020թ. նոյեմբերի 30-ի նկատմամբ՝ 23.5%-ով, 2019թ.նոյեմբերի 30-ի նկատմամբ՝ 65.4%-ով,

9) ՀՀ Կենտրոնական բանկի արտաքին պարտքը կազմել է 226.5 մլրդ ՀՀ դրամ, նվազելով 2020թ. դեկտեմբերի 31-ի նկատմամբ՝ 5.8%-ով, 2020թ. նոյեմբերի 30-ի նկատմամբ՝ 7.4%-ով, 2019թ. նոյեմբերի 30-ի նկատմամբ՝ 7.4%-ով,

10) ՀՀ կառավարության արտաքին պարտքը դոլարային արտահայտությամբ կազմել է 6 մլրդ 184.3 մլն ԱՄՆ դոլար, աճելով 2020թ. դեկտեմբերի 31-ի նկատմամբ՝ 10.6%-ով, 2020թ.նոյեմբերի 30-ի նկատմամբ՝ 12%-ով, 2019թ.նոյեմբերի 30-ի նկատմամբ՝ 21%-ով,

11) ՀՀ կառավարության ներքին պարտքը դոլարային արտահայտությամբ կազմել է 2 մլրդ 508.7 մլն ԱՄՆ դոլար, աճելով 2020թ. դեկտեմբերի 31-ի նկատմամբ՝ 31%-ով, 2020թ. նոյեմբերի 30-ի նկատմամբ՝ 29.1%-ով, 2019թ. նոյեմբերի 30-ի նկատմամբ՝ 62.7%-ով,

12) ՀՀ ԿԲ արտաքին պարտքը դոլարային արտահայտությամբ կազմել է 466.3 մլն ԱՄՆ դոլար, աճելով 2020թ. դեկտեմբերի 31-ի նկատմամբ 1.4%-ով, իսկ 2020թ. նոյեմբերի 30-ի և 2019թ. նոյեմբերի 30-ի նկատմամբ նվազելով համապատասխանաբար 3.1%-ով և 8.9%-ով:

ԱԺԲԳ









ՀՀ կառավարության արտաքին վարկերի գծով պարտքը 2021թ. նոյեմբերի 30-ի դրությամբ կազմել է 4 մլրդ 478.41 մլն ԱՄՆ դոլար, նվազելով 2020թ. դեկտեմբերի 31-ի նկատմամբ 4%-ով, 2020թ. նոյեմբերի 30-ի նկատմամբ՝ 2.7%-ով, իսկ 2019թ. նոյեմբերի 30-ի նկատմամբ աճելով 8.7%-ով:

2021թ. նոյեմբերի 30-ի դրությամբ ՀՀ կառավարության արտաքին վարկերի գծով պարտքի կառուցվածքում՝

1) միջազգային կազմակերպությունների բաժինը կազմել է 77.28%, ինչը ավել է 2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ արձանագրված ցուցանիշից 0.37 տոկոսային կետով, 2020թ. նոյեմբերի 30-ի ցուցանիշից՝ 0.49 տոկոսային կետով, 2019թ. նոյեմբերի 30-ի ցուցանիշից՝ 1.49 տոկոսային կետով,

2) օտարերկրյա պետությունների բաժինը կազմել է 22.34%, ինչը պակաս է 2020թ. դեկտեմբերի 31-ի համեմատությամբ՝ 0.3 տոկոսային կետով, 2020թ. նոյեմբերի 30-ի համեմատությամբ՝ 0.42 տոկոսային կետով, 2019թ. նոյեմբերի 30-ի համեմատությամբ՝ 1.37 տոկոսային կետով,

3) առևտրային բանկերի բաժինը կազմել է 0.37%, ինչը 2020թ. դեկտեմբերի 31-ի, ինչպես նաև 2020թ.նոյեմբերի 30-ի և 2019թ. նոյեմբերի 30-ի համեմատությամբ պակաս է համապատասխանաբար՝ 0.07, 0.07 և 0.12 տոկոսային կետով:

2021թ. հունվար-նոյեմբերին ՀՀ կառավարության պարտքի գծով վճարված՝

1) տոկոսավճարները կազմել են 177.95 մլրդ դրամ, ինչը 2020թ. նույն ժամանակաշրջանի համեմատությամբ ավել է 17.04 մլրդ դրամով, իսկ 2019թ. նոյեմբերի 30-ի համեմատությամբ ավել է 24.52 մլրդ դրամով:

2) ներքին տոկոսավճարները կազմել են 108.07 մլրդ դրամ, ինչը 2020թ. և 2019թ. նույն ժամանակաշրջանների համեմատությամբ ավել է համապատասխանաբար 21.38 և 38.73 մլրդ դրամով:

3) արտաքին տոկոսավճարները կազմել են 69.88 մլրդ դրամ, ինչը պակաս է 2020թ. նույն ժամանակաշրջանի համեմատությամբ՝ 4.34 մլրդ դրամով, իսկ 2019թ.նույն ժամանակաշրջանի համեմատությամբ՝ 14.2 մլրդ դրամով:

ԱԺԲԳ

Պետական բյուջեի պակասուրդի ֆինանսավորումը փոխառու զուտ միջոցների հաշվին (առանց մուրհակների), մլրդ դրամ



Պետական բյուջեի պակասուրդի ֆինանսավորումը ներքին և արտաքին փոխառու զուտ միջոցների հաշվին (առանց մուրհակների), մլրդ դրամ



ՀՀ կառավարության կողմից արտաքին վարկերի ստացումը և սպասարկումը, մլն ԱՄՆ դոլար



ՀՀ կառավարության կողմից արտաքին վարկերի ստացումը և սպասարկումը, մլն ԱՄՆ դոլար



2020թ. հունվար-նոյեմբերին պետական բյուջեի պակասուրդի ֆինանսավորումը՝

1) փոխառու զուտ միջոցների հաշվին կազմել է 573.32 մլրդ դրամ, ինչը 2020թ. և 2019թ. նույն ժամանակաշրջանների համեմատությամբ ավել է համապատասխանաբար՝ 249.15 և 267.22 մլրդ դրամով,

2) ներքին փոխառու միջոցների հաշվին կազմել է 221.45 մլրդ դրամ, ինչը 2020թ. նույն ժամանակաշրջանի համեմատությամբ պակաս է 64.43 մլրդ դրամով, իսկ 2019թ. նույն ժամանակաշրջանի համեմատությամբ ավել է 119.49 մլրդ դրամով,

3) արտաքին փոխառու միջոցների հաշվին կազմել է 351.9 մլրդ դրամ, ինչը 2020թ. և 2019թ.նույն ժամանակաշրջանների համեմատությամբ ավել է համապատասխանաբար 313.64 և 300.81 մլրդ դրամով:

ՀՀ կառավարության կողմից 2021թ. հունվար-նոյեմբերին՝

1) արտաքին վարկերի սպասարկման նպատակով վճարվել է 69.37 մլն դոլար տոկոսավճար, ինչը 2020թ. և 2019 թ.նույն ժամանակաշրջանների համեմատությամբ պակաս է համապատասխանաբար 26.1%-ով և 26.6%-ով,

2) արտաքին վարկերի սպասարկման նպատակով մարվել է 207.06 մլն դոլարի մայր գումար, ինչը 2020թ. և 2019թ.նույն ժամանակաշրջանների համեմատությամբ ավել է համապատասխանաբար 10%-ով և 41.6%-ով,

3) ստացվել են 158.65 մլն դոլարի վարկային միջոցներ, ինչը 2020թ. նույն ժամանակաշրջանների համեմատությամբ պակաս է 56.1%-ով, իսկ 2019թ. նույն ժամանակաշրջանի համեմատությամբ պակաս է 6.1%-ով,

4) արտաքին վարկերի սպասարկման նպատակով վճարվել է 276.43 մլն դոլար (տոկոսավճար և մայր գումարի մարում), ինչը 2020թ. նույն ժամանակաշրջանի համեմատութամբ պակաս է 2.0%-ով, իսկ 2019թ.նույն ժամանակաշրջանի համեմատությամբ ավել է 14.8%-ով:

ԱԺԲԳ

Պետական պարտատոմսերի ծավալը, մլրդ դրամ



Պետական պարտատոմսերի միջին ժամկետայնությունը, օր



ՀՀ Կառավարության պարտքի միջին տոկոսադրույքը, %



ՀՀ կառավարության պարտքի կառուցվածքը, ըստ թողարկման (ներգրավման) ժամկետայնության, %



22021թ. նոյեմբերի 30-ի դրությամբ՝

1) Շրջանառության մեջ գտնվող ՀՀ պետական պարտատոմսերի ծավալը կազմել է 1 տրիլիոն 189.1 մլրդ դրամ, ինչը 2020թ. դեկտեմբերի 31-ի, ինչպես նաև 2020թ. նոյեմբերի 30-ի և 2019թ. նոյեմբերի 30-ի համեմատությամբ ավել է համապատասխանաբար՝ 230.3, 245.1 և 507.9 մլրդ. դրամով,

2) Շրջանառության մեջ գտնվող ՀՀ պետական պարտատոմսերի միջին ժամկետայնությունը կազմել է 3838 օր, ինչը 2020թ. դեկտեմբերի 31-ի համեմատությամբ պակաս է 107 օրով, 2020թ. նոյեմբերի 30-ի համեմատությամբ պակաս է 186 օրով, իսկ 2019թ. նոյեմբերի 30-ի համեմատությամբ ավել է 81 օրով:

ՀՀ կառավարության պարտքի միջին տոկոսադրույքը 2021թ. նոյեմբերի 30-ի դրությամբ կազմել է 4.64, ինչը ավել է 2020թ. դեկտեմբերի 31-ի համապատասխան ցուցանիշից՝ 0.36 տոկոսային կետով, 2020թ. նոյեմբերի 30-ի ցուցանիշից՝ 0.25 տոկոսային կետով, իսկ 2019թ. նոյեմբերի 30-ի համապատասխան ցուցանիշից պակաս է 0.29 տոկոսային կետով:

ՀՀ կառավարության պարտքի կառուցվածքում ըստ թողարկման (ներգրավման) ժամկետայնության 2021թ. նոյեմբերի 30-ի դրությամբ՝

1) կարճաժամկետ պարտքի բաժինը կազմել է 1.17%, ինչը փոքր է 2020թ. դեկտեմբերի 31-ի ցուցանիշից՝ 0.05 տոկոսային կետով, մեծ է 2020թ. նոյեմբերի 30-ի ցուցանիշից՝ 0.08 տոկոսային կետով, իսկ 2019թ. նոյեմբերի 30-ի ցուցանիշի համեմատությամբ մեծ է 0.33 տոկոսային կետով,

2) միջնաժամկետ պարտքի բաժինը կազմել է 8.51%, ինչը 2020թ. դեկտեմբերի 31-ի, 2020թ. նոյեմբերի 30-ի և 2019թ. նոյեմբերի 30-ի համեմատությամբ մեծ է համապատասխանաբար 1.62, 1.64 և 1.5 տոկոսային կետերով,

3) երկարաժամկետ պարտքի բաժինը կազմել է 90.33%, ինչը 2020 թ. դեկտեմբերի 31-ի, 2020թ. նոյեմբերի 30-ի ի և 2019թ. նոյեմբերի 30-ի համեմատությամբ փոքր է համապատասխանաբար 1.56, 1.71 և 1.83 տոկոսային կետերով:

Աղբյուրը՝ Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության ինտերնետային կայքում հրապարակված Հայաստանի Հանրապետության պետական պարտքի ամսական և տարեկան տեղեկագրերը

ԱԺԲԳ

ՏԵՂԵԿԱՆՔ
ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՊԱՐՏՔԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ 2021-2023 ԹԹ. ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ՈՒՂԵՆՇԱՅԻՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ (նոյեմբեր ամսվա վերջի դրությամբ)

ՀՀ կառավարության պարտքի մինչև մարում միջին ժամկետը, տարի



Առաջիկա 365 օրվա ընթացքում մարման ենթակա ՀՀ կառավարության պարտքի տեսակարար կշիռը (պետական գանձապետական պարատոմսերի գծով), %



ՀՀ կառավարության պարտքի կառուցվածքն ըստ տոկոսադրույքի, %



ՀՀ Կառավարության ներքին և արտաքին պարտքի կշիռները, %



ՀՀ կառավարության պարտքի կառավարման 2021-2023թթ. ռազմավարական ծրագրով՝

1) պարտքի մինչև մարում միջին ժամկետի ուղենշային ցուցանիշը սահմանված է 8-11 տարի: ՀՀ կառավարության պարտքի մինչև մարում միջին ժամկետը 2021թ. նոյեմբերի 30-ի դրությամբ կազմել 8.51 տարի: Այս ցուցանիշը 2020թ. նոյեմբերի 30-ի և 2019թ. նոյեմբերի 30-ի դրությամբ արձանագրված ցուցանիշներից պակաս է 0.35 և 0.41 տարով,

2) առաջիկա 365 օրվա ընթացքում մարման ենթակա ՀՀ կառավարության պարտքի տեսակարար կշռի (պետական գանձապետական պարատոմսերի գծով) ուղենշային ցուցանիշը սահմանված է առավելագույնը 20%: Առաջիկա 365 օրվա ընթացքում մարման ենթակա ՀՀ կառավարության պարտքի տեսակարար կշիռը (պետական գանձապետական պարատոմսերի գծով) 2021թ. նոյեմբերի 30-ի դրությամբ կազմել է 10.65%, որը 2020թ. նոյեմբերի 30-ի և 2019թ. նոյեմբերի 30-ի դրությամբ արձանագրված մակարդակներից փոքր է 0.48 և 2.5 տոկոսային կետերով,

3) ֆիքսված տոկոսադրույքով պարտքի կշռի ուղենշային ցուցանիշը սահմանված է առնվազն 80%: ՀՀ կառավարության պարտքի կառուցվածքն ըստ տոկոսադրույքի 2021թ. նոյեմբերի 30-ի դրությամբ ունեցել է հետևյալ պատկերը. ֆիքսված տոկոսադրույքով՝ 82.99%, լողացող տոկոսադրույքով՝ 17.01%: Ընդ որում, 2021թ. նոյեմբերի 30-ի ի դրությամբ արձանագրված ֆիքսված տոկոսադրույքի ցուցանիշը 2020թ. նոյեմբերի 30-ի համապատասխան ցուցանիշը գերազանցում է 2 տոկոսային կետով, իսկ 2019թ. նոյեմբերի 30-ի նույն ցուցաիշից պակաս է 2 տոկոսային կետով:

4) ներքին պարտքի ուղենշային ցուցանիշը սահմանված է առնվազն 25.%, ՀՀ կառավարության ներքին և արտաքին պարտքի կշիռները 2021թ. նոյեմբերի 30-ի դրությամբ ունեցել են հետևյալ պատկերը. արտաքին պարտք՝ 71.14%, ներքին պարտք՝ 28.86%: Ընդ որում, 2021թ. նոյեմբերի 30-ի դրությամբ արձանագրված ներքին պարտքի կշռի ցուցանիշը 2020թ. և 2019թ. համապատասխան ժամանակաշրջանների ցուցանիշները գերազանցում է համապատասխանաբար 2.84 և 5.68 տոկոսային կետերով:

Աղբյուրը՝ Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության ինտերնետային կայքում հրապարակված Հայաստանի Հանրապետության պետական պարտքի ամսական և տարեկան տեղեկագրերը